



<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈւՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ
Առարկան՝ Պատմություն
Հետազոտող ուսուցիչ՝ Համեստ Առաքելյան
Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Կոտայքի մարզ Չարենցավանի 2-րդ հ/դ*

Երևան 2022

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
2. ԳԼՈՒԽ 1 ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	5
3. ԳԼՈՒԽ 2 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	9
4. ԳԼՈՒԽ 3 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ.....	12
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	15
6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությամբ է պայմանավորվում մարդկային հասարակության անվտանգությունը>>:

Աղեր

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ:

Ժամանակակից հասարակական հարաբերությունները ընտանիքում ծնում են տարաբնույթ տնտեսական, սոցիալական, բժշկական, իրավաբանական և կրթական խնդիրներ, որոնցից բխող հավանական դժվարություններն ու բարդությունները, դրսևորվելով ընտանեկան կյանքի տարբեր ոլորտներում, կարող են վերածվել հոգեբանական բարդ ճգնաժամային իրավիճակների և ընդգրկել ընտանիքն ամբողջությամբ:

Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերությունները էական փոփոխությունների են ենթարկվել, փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից տեխնոլոգիաները իրենց դրական և բացասական ազդեցությամբ մեծ ներգործություն ունեն ընտանիքի անդամների հոգեբանության և նրանց փոխհարաբերությունների վրա: Մարդկային սովորական շփումը փոխարինվել է վիրտուալ հաղորդակցությամբ՝ ազդելով մարդկանց ինքնարտահայտման և ինքնադրսևորման վրա: Հաճախ ապրելով միևնույն հարկի տակ՝ ընտանիքի անդամ-

ները օտարանում են տարբեր պատճառներով: Թվում է, թե ժամանակակից աշխարհում, երբ զարգացման բարձր մակարդակի են հասել տեխնոլոգիաները և մարդկային միտքը՝ նվազագույնի հասցնելով կենցաղային ծանրաբեռնվածությունը, խնդիրները ևս պետք է նվազեին, սակայն իրականում հակառակն է կատարվում: Ելնելով խնդրի արդիականությունից՝ որոշեցի ընտրել «Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ» թեման՝ փորձելով ծանոթանալ տվյալ ոլորտում առկա գիտական ուսումնասիրությունների հետ, ներառել եմ նաև անապահով ընտանիքների հոգեբանությունը, փորձելով ներկայացնել կոնֆլիկտների տեսակները և առաջացման պատճառները: Թեման բավականին ծավալուն է, ընդլայնվելու հակում ունի և վերջնական լուծում չունի, այդ իսկ պատճառով փորձել եմ անդրադառնալ հատկապես առանցքային հիմնախնդիրներին, առաջ քաշել լուծման որոշակի տարբերակներ:

Մարդկային քաղաքակրթությունն իր զարգացման ընթացքում ստեղծել է մի շարք անփոխարինելի արժեքներ, որոնց թվին է պատկանում նաև ընտանիքը:

Ընտանիք համարվում է ամուսինների, ծնողների և երեխաների փոխհարաբերությունների համակարգը, փոքր խումբ, որի անդամները միմյանց հետ կապված են ամուսնական կամ արյունակցական հարաբերություններով, ընդհանուր կենցաղով և բարոյական փոխադարձ պատասխանատվությամբ: Այն մարդկանց սոցիալական հանրության առավել հին ձևերից է և ծագել է ազգերից և պետություններից շատ ավելի վաղ՝ նախնադարյան համայնական հասարակարգի ընդերքում: Ընտանիքը առաջնային խումբ է, որովհետև նրա անդամների հարաբերությունները շատ սերտ են, հուզականությամբ և մարմնային շփումով հագեցած:

Բազմաթիվ գիտական և այլ աշխատանքներ են նվիրվել ընտանիքի ամենատարբեր և միշտ էլ օրախնդիր հիմնահարցերին: Ընտանիքի վերաբերյալ արտաքուստ կարծես թե ամեն ինչ հայտնի է ու պարզ, սակայն այն նույնքան պարզ ու նույնքան բարդ է, որքան ինքը՝ հասարակությունը: Ընտանիքը և հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման, նրա մարդկային ճակատագրի համար: Սովորաբար, երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի, դեռահասի լավ կամ վատ արարքի մասին, առաջին հերթին մեզ հետաքրքրում է այն, թե ինչ ընտանիքից է, ինչ դաստիարակություն է ստացել, ովքեր են և ինչով են զբաղվում նրա ծնողները: Եթե նրա վարքագիծը հավանության կամ գովասանքի է արժանանում շրջապատողների կողմից, ապա պարզ է դառնում, որ տվյալ անձը դաստիարակվել է լիարժեք ընտանիքում, ընտանեկան առողջ բարոյահոգեբանական մթնոլորտում, այսինքն՝ բարենպաստ ընտանիքում:

Յուրաքանչյուր մարդ, դառնալով չափահաս և ինքնուրույն, ցանկություն է ունենում ստեղծելու իր ընտանիքը, ունենալու իր սեփական անկյունն ու երեխաները: Առողջ ընտանիքներում հարաբերությունները սերտ են ու անմիջական, ընտանիքի անդամները մշտապես կապի մեջ են, հաճախակի են շփվում, լավ գիտեն միմյանց,

Ընտանիքն այն առաջին միջավայրն է, որտեղ աճում, զարգանում և դաստիարակվում է երեխան, ուստի նաև այստեղ են առաջին դպրոցն ու ուսուցիչները, որտեղ և ում օգնությամբ նա սովորում է ապրել: Ժամանակակից ընտանիքը էապես տարբերվում է ոչ այնքան վաղ անցյալի ընտանիքներից ոչ միայն սոցիալ-բարոյական ֆունկցիաներով, այլև ընտանիքի անդամների միջև անընդհատ փոփոխվող հուզական-հոգեբանական հարաբերությունների տեսանկյունից, որը հսկայական դեր է կատարում դեռահասի անձնավորության ձևավորման առումով:

Ամեն ոք պետք է իրազեկ լինի ընտանիքի, ընտանեկան կյանքի հոգեբանական հիմնահարցերին: Ժողովրդական ասույթն ասում է. «Ընտանիքը դաստիարակության ամենամեծ համալսարանն է»: Այն, թե ինչպիսին կլինի ապագա երեխայի կյանքն ու դաստիարակությունը, մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են նրա ծնողները պատրաստ ընտանեկան կյանքին և երեխայի դաստիարակությանը: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ շատ երեխաներ իրենց ապագա ընտանիքը կազմում են՝ հիմք ընդունելով սեփական ընտանիքի մոդելը: Այդ է պատճառը, որ բոլոր ժամանակներում էլ մեծ նշանակություն է տրվել ընտանեկան դաստիարակության ճիշտ կազմակերպմանը:

Սակայն, այնուամենայնիվ, անհերքելի է համարվում այն փաստը, որ երեխայի դաստիարակության գործում կարևորագույն դերը պատկանում է ընտանիքին: Հենց ընտանիքն է եղել, կա և հավանաբար կլինի անձնավորության ձևավորման կարևորագույն միջավայրը և դաստիարակության գլխավոր ինստիտուտը: Ընտանիքն այն կարևորագույն երևույթներից մեկն է, որն ուղեկցում է մարդուն նրա ողջ կյանքի ընթացքում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ծնողները իրենց երեխայի դաստիարակությունը պետք է սկսեն դեռևս ներարգանդային (պրենատալ) զարգացման փուլից: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ եթե պտուղը ծնողի կողմից ցանկալի և սպասված է, ապա ծնունդից հետո նրանց միջև ստեղծվում է ամուր հուզական կապ: Մեզ է հասել մի հետաքրքիր դեպք. ամուսնական մի զույգ անվանի մտածողներից մեկի մոտ է բերում իր նորածնին և հարցնում, թե երբ պետք է սկսեն երեխայի դաստիարակությունը: Նա պատասխանում է. «Դուք արդեն ինը ամիս ուշացել եք»:

Որպեսզի երեխայի դաստիարակությունն ընտանիքում արդյունավետ լինի, ծնողները պետք է հաշվի առնեն յուրաքանչյուր երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները, պահանջմունքներն ու հետաքրքրությունները:

Ինչպես արդեն վերը նշեցինք, ընտանիքում են դրվում երեխայի դաստիարակության հիմքերը: Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման տեսանկյունից հատկապես կարևորվում է բարոյական, գեղագիտական և աշխատանքային դաստիարակության դերը:

Բարոյական դաստիարակությունը ընտանիքում: Կան այնպիսի որակներ, նորմեր, որոնք երեխայի մեջ պետք է դաստիարակել ընտանիքում, քանի որ նույնիսկ մանկավարժները չեն կարող դրանք այնպես իրականացնել, ինչպես ծնողները, օրինակ՝ մարդասիրություն (հումանիզմ), նրբանկատություն, անկեղծություն, նվիրվածություն, հոգատարություն և այլն: Այս որակները երեխաների մեջ դաստիարակելու համար կարելի է օգտագործել ընտանեկան ավանդույթներ, սովորույթներ ու միջոցառումներ, որոնք շատ ավելի օգտակար կարող են լինել, քան հազարավոր քարոզներն ու խրատները:

Գեղագիտական դաստիարակությունը ընտանիքում: Երեխաների գեղագիտական դաստիարակության իրագործման գործում կարևոր դեր կարող են խաղալ գեղարվեստական գրականության ընթերցանությունը, կարդացած գեղարվեստական ստեղծագործությունները ընտանիքի անդամների և ուսուցիչների հետ քննարկելը, կերպարների, բնավորության, անհատական հոգեբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծությունները և այլն: Ծնողները պետք է հաշվի առնեն, որ երեխայի մեջ գեղեցիկը տեսնելու, գնահատելու և պահպանելու ունակությունը պետք է ձևավորել դեռևս վաղ մանկության տարիներին: Կարևոր է երեխաներին սովորեցնել ամեն ինչում տեսնել գեղեցիկը՝ հիմք ընդունելով անվանի մտածողներից մեկի հետևյալ խոսքերը. <<Վարդի փշերից գանգատվելու փոխարեն պետք է ուրախանալ, որ փշերի մեջ վարդ է աճում>>: Այդ ամենը կնպաստի երեխաների գեղագիտական կուլտուրայի, պատկերացումների ու դատողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Աշխատանքային դաստիարակությունը ընտանիքում: Միշտ պետք է հիշել, որ աշխատանքի ընթացքում և նրա միջոցով է մարդը դաստիարակվում: Ծնողները պետք է երեխաներին բացատրեն, պարզաբանեն, թե աշխատանքը որքան կարևոր է մարդու կյանքի, հասարակության զարգացման, պետության կայացման և հզորացման համար, նրանց սովորեցնեն հարգել աշխատանքն ու աշխատավոր մարդուն՝ անկախ վերջինիս մասնագիտությունից: Վաղ մանկությունից սկսած՝ երեխաներին պետք է մասնակից դարձնել տնային տարբեր տեսակի աշխատանքների իրականացմանը, օրինակ, հավաքել անկողինը, մաքրել իր անկյունը, խնամքով վերաբերել դասագրքերին, սեփական հագուստն ու կոշիկները մաքուր պահել:

Ծնողների ինքնադաստիարակությունը: Դաստիարակությունը անվերջ և շարունակական գործընթաց է: Յուրաքանչյուր ծնող պետք է մշտապես հիշի, որ իր երեխայի դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է իր իսկ դաստիարակվածության մակարդակից: Այդ առիթով ականավոր մանկավարժ Ա.Ս.Մակարենկոն նշել է, որ ծնողը երեխային դաստիարակում է ոչ միայն այն ժամանակ, երբ խոսում է նրա հետ կամ ինչ-որ բան է սովորեցնում, այլ նաև իր արարքներով և գործողություններով: Օրինակ, եթե ծնողը երեխային սովորեցնում է սուտ չխոսել, ապա նախ և առաջ նա ինքը պետք է ճշտախոս լինի: Երեխաների աշխատանքային դաստիարակության իրականացման համար նախ իրենք պետք է դրական վերաբերմունք ունենան աշխատանքի նկատմամբ: Ինչպես նաև կարևոր է, որպեսզի ծնողները իրենք էլ մշտապես զբաղվեն ինքնակրթությամբ, հաճախակի այցելեն պատմական վայրեր, թանգարաններ՝ դրական օրինակ ծառայելով երեխաների համար: Երեխան պետք է զգա, որ ինքը սիրված մարդ է տանը, դպրոցում և ընդհանրապես հասարակության մեջ:

Այսպիսով, երեխայի դաստիարակությունը երբեք էլ դյուրին չի եղել: Երեխային կրթելն ու դաստիարակելը պահանջում է մեծ համբերություն, նվիրվածություն, ժամանակ, պարտքի ու պատասխանատվության զգացում, քանի որ ամեն ինչ՝ թե՛ դրականը, թե՛ բացասականը մարդը ստանում է հենց ընտանիքում:

Հայտնի է, որ ընտանիքը ամենալավ միջավայրն է երեխայի խնամքի և դաստիարակության համար, քանի դեռ այնտեղ ապահովված է նրա պաշտպանությունը: Կապվածության և սիրո հարաբերությունները բարենպաստ և անհրաժեշտ նախադրյալներ են երեխայի անձի նորմալ ձևավորման, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների կառուցման համար:

Նյութական անբավարար ապահովվածությունը և տնտեսական բազում հիմնախնդիրները պատճառ են դառնում հաճախակի ճգնաժամային իրադրությունների: Այս ամենի հետևանքով էլ հասարակության մեջ ընտանիքը դառնում է անբարենպաստ և խոցելի:

Ընտանիքի նկատմամբ անբարենպաստ գնահատականը կամ որակավորումը հիմնականում հոգեբանական է, ավելի ստույգ՝ սոցիալ-հոգեբանական: Ընտանիքի անբարենպաստությունը կարող է կապված լինել սոցիալ-տնտեսական գործոնների հետ, բնութագիրը կարող է և ոչ մի կապ չունենալ: Այսինքն ընտանիքի բարեկեցիկ և անբարեկեցիկ լինելը, արտահայտելով նրա նյութական վիճակը, դեռևս չի արտացոլում նրա հոգեբանական նկարագիրը, թեկուզ միջնորդավորված ձևով դա ազդում է այդ նկարագրի վրա: Անբարենպաստությունը իր մեջ ներառում է շփման, հաղորդակցման հարաբերությունների, վերաբերմունքի իդենտիֆիկացիայի նույնանման ցուցանիշներ, որոնք դրական ուղղվածություն չունեն կամ որոշակիորեն սոցիալապես ախտահարված են:

Անբարենպաստ ընտանիքի հոգեբանական բնութագիրը հատկանշվում է նրանով, որ այն մանկավարժորեն, հասարակայնորեն անընդունելի դաստիարակչական ներգործությամբ նպաստում է անձի սխալ կայացմանը, նրա մեջ բացասական վերաբերմունքների և դիրքորոշումների, հետաքրքրությունների և պահանջմունքների, հակումների ձեռքբերմանը, ինչպես նաև կյանքին ու շրջապատին չհարմարվելուն:

Ընտանիքում հաստատված երեխաների և ծնողների միջև աններդաշնակ հարաբերությունները կարող են բերել երեխաների մոտ վարքային խանգարումների,

ինչն իր հերթին կարող է պայմանավորել երեխայի անձի ձևավորման որոշակի շեղումներ: Այսինքն՝ այդպիսի ընտանիքը իր նկարագրով, վարք ու բարքով, կենսակերպով ստեղծում է հոգեբանական ակնառու նախադրյալներ և նպաստավոր պայմաններ այնտեղ աճող մարդու բարոյական և սոցիալական դեգրադացիայի համար: Այստեղ անձը ենթարկվում է աստիճանական դեֆորմացիայի, որն արտահայտվում է անձնային անբարենպաստ որակների ու հատկանիշների և դրանով պայմանավորված սոցիալապես ոչ համարժեք վարքի դրսևորումներով: Բոլորովին պարտադիր չէ, որ նման ընտանիքում մեծացող անձը անպայման ընտրի օրինազանց կամ օրինախախտ վարքի ուղին: Վերջինս ակնհայտորեն կկրի ընտանիքի անբարենպաստության կնիքը, կարող է լինել ոչ բարյացակամ, չկամ, գուրկ գրասրտությունից, անտարբեր լինել մարդկանց նկատմամբ, չունենալ հասարակական ակտիվություն, ունենալ արտահայտված չարություն, ագրեսիվություն, մարդասեր չլինել, որոնք կարտահայտվեն մարդ-մարդ, մարդ-հասարակություն հարաբերություններում:

Անբարենպաստ ընտանեկան պայմաններում ապրող երեխաներից շատերը կարգազանց և հակասոցիալական վարք դրսևորողներն են: Իսկ այդ ամենը պայմանավորված է ընտանիքում ծնողների կրթական մակարդակի բացակայությունից, ոչ ճիշտ դաստիարակությունից, անապահովվածությունից, ծնողների անբարո վարք դրսևորելուց, ամուսնալուծված ընտանիքում մեծանալուց, ինչպես նաև ամենօրյա կոնֆլիկտային իրավիճակներին մասնակից լինելուց:

Անբարենպաստ ընտանիքների սոցիալ-հոգեբանական կառուցվածք, դրանց հարաբերությունների յուրահատկությունները, բնականաբար, նկարագրվածով չեն սահմանափակվում: Ակնհայտ է այն, որ ընտանիքի անբարենպաստությունը ինքնին սթրեսածին, կոնֆլիկտածին է և առաջացնում է դաստիարակչական և բարոյական բնույթի շատ հիմնախնդիրներ, որոնց նախազգուշացումն ու հաղթահարումը հասարակական, պետական կարևորություն ունեն:

Ընդհանրացնելով անբարենպաստ ընտանիքի սոցիալ-հոգեբանական նկարագիրը՝ նշենք դրա հիմքը կազմող հիմնական առանձնահատկությունները.

ա. հոգեբանական անհամատեղելիությունը ծնողների միջև, որով առավելապես պայմանավորվում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտը և հարաբերությունները.

- բ. մանկավարժական անհամատեղելիություն, որն արտացոլում է երեխաների դաստիարակության հարցում տարակարծությունը.
- գ. ընտանիքի դերի գնահատման, ընտանեկան հարաբերությունների կազմակերպման և կառավարման կարողությունների բացակայությունը.
- դ. ծնողների գիտակցության երկատվածություն
- ե. ծնողների սոցիալական դերի, վարքագծի և սպասումների միջև հոգեբանական անհամատեղելիություն.
- զ. Խոր հոգեբանական հակասությունը ծնողների վարքի ու գործունեության և երեխաներին ներկայացվող պահանջների մջև.
- է. երեխաների ճիշտ դաստիարակության հարցում ծնողների ցանկությունների և նրանց գիտելիքների ու հնարավորությունների միջև հակասություններ:

Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Առանձնացվում է ընտանեկան կոնֆլիկտների հետևյալ տեսակներն ու հիմնական պատճառները.

1. Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև: Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի ծանր բնավորությունը, սեռական անբավարարվածությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն: Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում: Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով:

Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկու-

սացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեւոմատիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևոյթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևոյթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

2. Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում:

Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված:

3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ստելության ինչպես ծնողի, այն- պես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն

առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում Տնորմալ է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է <<ծանր>> բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Այն, որ խաթարվել է նախկին բարեկեցությունը, կայունությունը, ապագայի նկատմամբ դրական դիրքորոշումը փոխարինվել է անորոշությունների, փոխվել են հոգևոր արժեքները, որոնք քայքայիչ, վնասաբեր ազդեցություն են ունենում մարդու հոգեկանի վրա, ազդեցիվություն ձևավորում, անհրաժեշտ է ընտանիքում հոգեբանական կոմֆորտի ապահովումը:

Այն ամբողջ հոգեբանական խնդիրների համակարգը, որը ի հայտ է գալիս ամուսինների, ծնողների, երեխաների մոտ հնարավոր է լուծել միայն ներընտանեկան հարաբերությունների ձևավորմամբ: Հակամարտությունները կամ վեճերը կազմում են հասարակության մեջ կյանքի անբաժանելի տարր: Լավ կառավարվող հակամարտությունը հաստատվում է որպես զարգացման և առաջընթացի միջոց, ուստի անհրաժեշտ է դրան դիմակայել՝ դրանից դասեր քաղելու համար:

Ակնհայտ է, որ ընտանեկան կոնֆլիկտները բնական բան է, քանի որ ընտանիքի միավորի անդամների համակեցության պայմաններում՝ տարբեր տարիքի, մտքի և կյանքը տեսնելու ձևերի հետ, բախումն անխուսափելի է: Այնուամենայնիվ, հիմնարար բանը ոչ թե ամեն գնով բախումներից խուսափելն է, քանի որ դա անհնար է, այլ խուսափել ազդեցիվության սրացումից և այն կարգավորել խելացիորեն և հմտորեն:

Այն պահին, երբ ընտանիքում, կամ ընտանիքի տարածքում կոնֆլիկտ է հայտնվում, հայտնվում է նաև անկայունություն, որը կարող է հանգեցնել հիասթափությունների և անհանգստությունների, նույնիսկ չափազանցված: Բացի այդ հին խնդիրները կարող են սկսել կրկին դրսևորել, որոնք չեն լուծվել և որոնք միայն նպաստում են հակամարտության գնդակն ավելի մեծացնելուն:

Ընտանեկան ցանկացած ճգնաժամ պահանջում է բոլոր անդամների համագործակցությունը, ինչպես նաև վերափոխում և հարմարեցում նոր իրավիճակի, քանի որ ընտանեկան վեճի ընթացքում ընտանեկան համատեքստում սահմանված Կանոնները դառնում են անորոշ և դրանց վրա անհրաժեշտ է նորից աշխատել: Ընտանեկան կոնֆլիկտների հուզական բաղադրիչի պատճառով շատ դեպքերում մարդիկ

հակված են վիճել ցանկացած պահի և ցանկացած վայրում: Այնուամենայնիվ ավելի լավ է հետաձգել քննարկումը, երբ հոգիներն ավելի հանգիստ են, և համատեքստը ուղեկցում և նպաստում է երկխոսությանը:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, Ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, Որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. Կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. Ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. Բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սերգեյ Արզումանյան, Էլլա Գրին <<Իրավաբանական հոգեբանություն>> Երևան 2004թ.
2. Սեդրակ Սեդրակյան <<Ընտանիքի հոգեբանություն>> Երևան 2010թ.
3. Վանանե Միրզոյան <<Ընտանեկան կոնֆլիկտների տեսաները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա: Երևան 2014թ.
4. Տաթև գիտակրթական համալիր << Հոգեբանությունը և կյանքը>> հանդես
5. Беличева С. А. <<Основы превинтивной психологии>> 1993г.